

Թիւ 25685
Մարտ 17, 1978

Մեծայարգ
Տիար Անդրանիկ Թէրզեան
Նիւ Ճըրզի.

Յարգելի Տիար Թէրզեան,

Առաջած ենք ձեր եւ ձեր դստեր Մարկարէթ Նարկիզեանի կողմէ, ի յիշատակ ձեր տիկնոջ ֆլօրա Թէրզեանի, Առաջնորդարանի Թանգարանին նուիրուած եւ 110 տարուան հնուծիւն ունեցող ``Մայր Հայաստան`` գողարիկ գորգը, որուն համար կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը:

Առաջնորդարանիս հանդէպ ձեր ցոյց տուած մօտիկ հետաքրքրութիւնը մեծապէս գնահատելի է, եւ կը մաղթենք որ ուրիշներ եւս հետեւին ձեր այս ազնիւ օրինակին՝ մոխացնելու համար Թանգարանի արժէքաւոր առարկաներու թիւը:

Կ'աղօթենք որ Տէրը իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ ձեր սիրելի տիկնոջ հոգին, եւ ձեզի, ձեր դստեր եւ ձեր ըլոր պարագաներուն պարգեւէ քաջառողջ ու երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ